

## ՈՐՈՇՈՒՄ

ԵԹԿՊԻ-ի ռեկտորատի 2016թ. փետրվարի 15-ի  
նիստի /արձանագրություն N 10/

1. 2016թ. ԵԹԿՊԻ-ի տնտեսական գործունեությունն առավել արդյունավետ պլանավորելու նպատակով հանձնարարել ֆինանսատնտեսական աշխատանքների գծով պրոռեկտոր Վ. Եղիազարյանին և գլխավոր հաշվապահ Հ. Նալբանդյանին կազմել խիստ անհրաժեշտ սարքեր-սարքավորումների և պարագաների ցանկ՝ նշելով առաջնահերթությունը:
2. Դիմել ՀՀ ազգային կինոկենտրոնի տնօրինությանը՝ ԵԹԿՊԻ-ի կինոյի, հեռուստատեսության և անիմացիայի ֆակուլտետի ավարտական կուրսի ուսանողներ Իննա Աբրահամյանի, Մորիս Ամիրյանի և Վարդան Թովմասյանի ավարտական աշխատանքների (ֆիլմերի) նկարահանման համար ֆինանսական աջակցություն ցուցաբերելու խնդրանքով:
3. ԵԹԿՊԻ-ի ռեկտորատի 01.02.2016թ. նիստի որոշումների կատարման ընթացքը համարել բավարար,
  - 3.1 հանձնարարել ռեկտորատի անդամներին ռեկտորատի առաջիկա նիստում ներկայացնել առաջարկներ՝ ուղղված ինստիտուտի վարկանիշի բարելավմանը,
  - 3.2 հանձնարարել ուսխորհրդին զբաղվել ինստիտուտի կայքում ֆակուլտետները ներկայացնող՝ ֆակուլտետների գործունեությունը բնութագրող, նկարների ընտրությամբ և տեղադրմամբ:
4. Ինստիտուտի կարգապահական կանոնները խախտելու և ուսանողին ոչ վայել վարքագիծ դրսևորելու համար ռուսաց լեզվի թեքումով «Դերասանական արվեստ» մասնագիտության II կուրսի (ղեկավար Ալ. Գրիգորյան) ուսանողներին հայտարարել խիստ նկատողություն:
5. Գտնել հովանավոր ինստիտուտի կիսանկուղային տարածքը վերանորոգելու և ուսումնական գործընթացի բարելավման նպատակով օգտագործելու համար:

Գիտքարտուղար

Գ. Հովհաննիսյան